ՕՁՈՒՄ ՆՈՐԱՊՍԱԿ Տ. ԱԲՐԱՀԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Տ. ԱԲՐԱՀԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԿՐՏՉՅԱՆ

Առաջնորդ Սյունյաց թեմի



Ծնվել է 1961 թ. հունվարի 7-ին, Եղեգնաձորում: Նախնական կրթությունը ստացել է Եղեգնաձորի շրջանի Ռինդ գյուղի միջնակարգ դպրոցում:

1982 թ. ընդունվել է Հոգևոր ճեմարան:

1986 թ. ավարտել է ճեմարանը՝ պաշտպանելով «Սյունյաց Աթոռը Օրբելյանների իշխանության ժամանակ» ավարտական աշխատանքը:

1987 թ., ձեռամբ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1989 թ. նոյեմբերի 6-ին ստացել է մասնավոր վարդապետական աստիճան:

1992 թ. պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Հայր մերի» մեկնությունները հայ մեկնողական գրականության մեջ» թեմայով:

1989-1992 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի Բանասիրական ֆակուլտետում:

Դասավանդել է Հոգևոր ճեմարանում, աշխատել Քրիստոնեական քարոզչության կենտրոնում՝ որպես տնօրեն, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում:

1993 թ. նոյեմբերի 1-ից նշանակվել է Սյունյաց թեմի առաջնորդ:

Հեղինակ է մի շարք հոդվածների և գրքերի, որոնցից են՝ «Նախաշավիղ քրիստոնեական կրթության», Երևան, 1991, «Հայր Մեր»-ի մեկնությունները ըստ Գրիգոր Տաթևացու», Երևան, 1992, «Էջեր Սյունյաց Աթոռի պատմությունից», Ս. Էջմիածին, 1996: